ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ,

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970, 605 էջ։

Սովետահայ երաժշտագետները ուսումնասիրել ու լուսաբանել են ազգային երաժշտական մշակույթի շատ կարևոր հարցեր, ստեղծելով մենագրություններ՝ նվիրված առանձին կոմպոզիտորների և երաժշտական ժանրերի։ Սակայն, այնուամենայնիվ, մեր երաժշտական մշակույթի պատմության հետ կապված մի շարք խնդիրների ուսումնասիրությունը կարոտ է հետագա խորացման, լրացման և ամբողջականացման։

XIX դ. և XX դարասկզբի հայկական երաժշտության պատմության ուսումնասիրությանն է նվիրված Ալ. Շահվերդյանի արժեքավոր աշխատությունը[1]։ Դա հիշյալ ժամանակաշրջանի հայ երաժշտության պատմության գիտական ընդհանրացման առաջին փորձն էր, և, որպես այդպիսին, բնականաբար, ուներ իր բացերը, բավարար չէր փաստական նյութը։ Պարզ զգացվում էր, որ անհրաժեշտ է հավաքել ու դասդասել հայ աշուղական երգ ու նվագին, ֆոլկլորին, արևմտահայ երաժշտական գործիչներին, այլև առանձին խոշոր երաժիշտների կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող մի ամբողջ շարք տվյալներ, և դրանց օգնությամբ հյուսել նշված շրջանի հայ երաժշտության կապակցված պատմությունը։

Այդ շնորհակալ գործին ձեռնամուխ եղավ Մաթևոս Մուրադյանը, որի արդյունքն է «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» ստվարածավալ մենագրությունը։ Աշխատությունը բաղկացած է երկու բաժնից. առաջին բաժինը նվիրված է XIX դ. երաժշտական մշակույթի հարցերի լուսաբանմանը, երկրորդը՝ XX դ. երկու տասնամյակներին։

Առաջին հայացքից թվում է, թե այդ երկու բաժիններն իրենց ծավալով ու համաչափությամբ շատ են տարբեր իրարից. մեկն ընդգրկում է համարյա մի հարյուրամյակ, իսկ մյուսը՝ երկու տասնամյակ միայն։ Սակայն իրականում այդպես չէ, քանի որ այդ երկու շրջանները խիստ տարբերվում են իրարից մշակութային, հատկապես երաժշտական կյանքի հագեցվածությամբ։

XIX դ. երաժշտական կյանքը, որ զարգանում էր գլխավորապես Կոստանդնուպոլսում, ենթարկվեց հասարակական-քաղաքական հակասությունների բարդ իրադրության վերելքներին ու անկումներին։

Այսպես, եթե անցյալ դարի 50—60-ական թվականներին արևմտահայ երաժշտական կյանքը բուռն վերելք էր ապրում, ապա այդ դարի վերջին երկու տասնամյակները բավական տխուր պատկեր են ներկայացնում։ Իսկ XX դ. առաջին երկու տասնամյակներն, ընդհակառակն, աչքի են ընկնում երաժշտական կյանքի հագեցվածությամբ, ստեղծագործական վերելքով՝ ինչպես Արևելյան, այնպես էլ որոշ չափով Արևմտյան Հայաստանում։ Այնպես որ այդ երկու տասնամյակները, որոնց ընթացքում բացահայտվեցին Կոմիտասի, Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Ռոմանոս Մելիքյանի, ինչպես և ուրիշ կոմպոզիտորների ու կատարողների ստեղծագործական առանձնահատկությունները, հարուստ և բազմազան նյութ են տալիս հետազոտողին։

Մուրադյանի ուսումնասիրությունը ընդգրկում է այդ հարուստ նյութը։ Մանրակրկիտ ուսումնասիրելով արևմտահայ և արևելահայ երաժշտական մշակույթները, հեղինակը այդ հսկայական նյութը պարփակել է պարզ, տրամաբանական ու հստակ կառուցվածքի մեջ։

Գրքի առաջին բաժինը, որը ինչպես նշեցինք, նվիրված է XIX դ. հայ երաժշտությանը, բաղկացած է հինգ գլխից։ Առաջին գլխում հեղինակը հանգամանորեն լուսաբանում է Արևելյան և Արևմտյան Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական և մշակութային պայմանները։ Շեշտելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու խոշոր պատմական նշանակությունը, նա անդրադառնում է հայ-ռուսական մշակութային, ազգային գրականության և արվեստի ընդհանուր վերելքին։ Հանգամանորեն կանգ է առնում երաժշտական կյանքի վրա, ցույց տալով գուսանա-աշուղական, ժողովրդական և հոգևոր երաժշտության վիճակը այդ շրջանում, որի ընթացքում կատարվել են նաև ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման առաջին քայլերը։

---

[1] «Հայ երաժշտության պատմության ակնարկներ» (XIX—XX դդ.), Երևան, 1959։

Նավայուն նյութ է ընդգրկում երկրորդ գլուխը։ Այստեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է XIX դ. երկրորդ կեսի հայ պրոֆեսիոնալ երաժշտության պատմությունը։ Նկարագրելով հասարակական-քաղաքական և կուլտուր-կրթական պայմանները, Մուրադյանը կանգ է առնում մի շարք կարևոր հարցերի վրա։ Այսպես, նա մեծ նշանակություն է տալիս հայ գրականության առաջատար դերին, վերլուծում է դեմոկրատ-հեղափոխական Միքայել Նալբանդյանի երաժշտական հայացքները, տալիս է Կոստանդնուպոլսի մշակութային կյանքի պատկերը, ընդգծում է «Քնար հայկական» երաժշտական ընկերության, ինչպես նաև համանուն պարբերականի նշանակությունը։ Նա հատկապես անդրադառնում է այդ շրջանում հանդես եկած առանձին երաժիշտների գործունեությանը, որոնցից առավել աչքի ընկնողները՝ Արիստակես Հովհաննիսյանը, Դարրիել Սրանյանը, Եղիա Տնտեսյանը, Նիկողոս Թաշճյանը, Հովհաննես Մյուհենտեսյանն առանձնացվել են փոքրիկ դիմանկար բաժիններում, ուր հեղինակը տվել է և՛ նրանց կենսագրական տվյալներ, և՛ ստեղծագործական գործունեության գնահատականը։

Այս գլխում առավել նշանակալից տեղ է հատկացված հայկական երաժշտական թատրոնի ստեղծման և Տիգրան Չուխաճյանի անձնավորության հարցերին՝ միաժամանակ բազմակողմանի և օբյեկտիվ լուսաբանելով Կոստանդնուպոլսի երաժշտական կյանքը։

Դժվար պայմաններում էր ծնունդ առնում պրոֆեսիոնալ նոր երաժշտությունը։ Արևելյան Հայաստանում, այդ ժամանակաշրջանում, գոյություն չունեին պրոֆեսիոնալ երաժշտական կազմակերպություններ, որոնք նպաստեին երաժշտական կյանքի զարգացմանը։ Դրա փոխարեն մեծ դեր էին կատարում դուդուկահարների, զուռնաչիների, սազանդարների անսամբլները, ինչպես նաև աշուղական համքարությունները։ Կարևոր իրադարձություն էին երգարանների և նոտաների առաջին հրատարակումները։

Հայ մտավորականությունն, իր հերթին, ամեն կերպ նպաստում էր պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմանը։ Ելնելով այս հանգամանքից Մ. Մուրադյանը մեծ տեղ է հատկացրել Թիֆլիսի մշակութային կյանքի լուսաբանմանը։ Թիֆլիսում մշտական իտալական օպերային թատրոնի, այնուհետև ռուսական օպերային թատրոնի ստեղծումը, համերգային կյանքի կազմակերպումը, հայկական դրամատիկական թատրոնի հիմնադրումը, կապը Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաների հետ, ուր երաժշտական կրթություն էին ստանում տաղանդավոր հայ երաժիշտները, հիմք նախապատրաստեցին ազգային երաժշտության կադրերի զարգացման համար։ Հանգես եկան այնպիսի նշանակալից դեմքեր, ինչպիսիք են Քրիստափոր Կարա-Մուրզան, Դենարիոս Ղորղանյանը, Նիկողայոս Տիգրանյանը, Մակար Եկմալյանը, որոնցից յուրաքանչյուրին հեղինակը նվիրում է առանձին ենթագլուխ։

Աշխատության հաջորդ՝ չորրորդ գլուխը նվիրված է երաժշտական կատարողական արվեստին, որտեղ ընդհանուր պատկերի նկարագրության ֆոնի վրա դարձյալ առանձնացված են առավել աչքի ընկնող կատարողների դիմանկարները (Գրիգոր Սինանյան, Նինա Դարիալի, Հեղինե Տերյան-Ղորղանյան, Նագեժդա Պապայան)։

Եվ, վերջապես, հինգերորդ գլուխը նվիրված է հայկական երաժշտագիտական մտքի զարգացմանը XIX դ. երկրորդ կեսում, ուր հեղինակը բարձր է գնահատում Եղիա Տնտեսյանի ինչպես հոգևոր երաժշտության, այնպես և խազերի, լադերի ու ազգային ձայնաշարերի բնագավառում կատարած հետաքրքիր ու արժեքավոր աշխատանքները։

XIX դ. վերջում կարևոր նշանակություն ունեցան Ք. Կարա-Մուրզայի և Ն. Տիգրանյանի երաժշտական-քննադատական հոդվածները։ Առաջինը բազմաթիվ հոդվածներում լուսաբանեց օպերային թատրոնի և համերգային կյանքը, իսկ երկրորդը չափազանց հետաքրքիր ու կարևոր մտքեր կարգացրեց արևելյան երաժշտության վերաբերյալ։ Այդ ամենը Մուրադյանը լուսաբանել է օբյեկտիվորեն և բավական ընդարձակ։

Մ. Հ. Մուրադյանի աշխատության երկրորդ մասը նվիրված է XX դ. երկու տասնամյակների հայկական երաժշտության հարցերին։

Այս բաժնի առաջին գլխում անդրադառնում է այն հիմնական պայմաններին ու աղբյուրներին, որոնցից սկիզբ առավ հայկական կոմպոզիտորական ստեղծագործությունը։ Նախ տրվում է Արևելյան և Արևմտյան Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի պատկերը, վերլուծվում է ժողովրդական և գուսանական երաժշտության վիճակը, հատկապես շեշտելով հայ մեծ գուսաններ Ջիվանու և Շերամի ստեղծագործության նշանակությունն ու արժեքը։ Ապա անցնում է երաժշտական կատարողական արվեստին, որի բուռն ծաղկումը բնորոշում է այդ ժամանակաշրջանի պատկերը։ Այստեղ էլ առավել խոշոր, մեր մշակութային կյանքում մեծ ու կարևոր դեր կատարած երաժիշտներն արժանանում են փոքրիկ, բայց դիպուկ դիմանկարային ակնարկների։

Հաջորդ գլուխը հեղինակը լիովին նվիրել է հայ երաժշտության առավել խոշոր դեմքին՝ Կոմիտասին, մանրամասն անդրադառնալով նրա ստեղծագործական, երաժշտական-ազգագրական, երաժշտագիտական և կատարողական գործունեությանը։

Երրորդ գլուխը ընդգրկում է երաժշտական ստեղծագործության հարցերը։ Խոսելով այդ ժամանակաշրջանում պրոֆեսիոնալ ստեղծագործության բուռն զարգացման, ժանրային բազմազանության մասին, հեղինակը շարունակում է իր նախընտրած կառուցվածքային սկզբունքը՝ տալով առանձին երաժշտագետների ակնարկ-դիմանկարներ։

Եվ, վերջապես, աշխատության չորրորդ գլուխը լուսաբանում է հայ երաժշտագիտության վիճակը XX դարասկզբում։

Մուրադյանն առաջինն է, որը փորձել է տալ հայկական երաժշտական մշակույթի պատմական մեծ ու կարևոր ժամանակաշրջանի սիստեմատիկ շարադրանքը։ Այդ հսկայական աշխատանքի ընթացքում նրան հաջողվել է հիմնականում հաղթահարել այնպիսի կարևոր ու դժվար պրոբլեմներ, ինչպիսիք են քաղաքական-հասարակական պայմանների լույսի տակ երաժշտական հարցերի լուսաբանումը, գիտական համոզիչ պարբերացման ստեղծումը և նյութի մատուցման հարմար ձևը։

Նյութի շարադրանքի ընթացքում, սակայն, հեղինակը բուն երաժշտական ստեղծագործության հարցերին չի անդրադարձել խոր գիտական մանրամասնությամբ ու երաժշտագիտական տեսական դիրքերից։ Բնականաբար այդ շատ դժվար է անել մի այնպիսի աշխատության մեջ, որտեղ ընդգրկված է հսկայածավալ փաստական նյութ, և որն ունի իր պարզ ու որոշակի նպատակը։ Այդ առումով այս երաժշտական-պատմական լայն կտավը հետագայում կարող է հիմք ծառայել բազմաթիվ ավելի խոր մասնագիտական ուսումնասիրություններին։

Աշխատության արժեքավոր կողմերից է նաև այն, որ հեղինակը, լրջորեն վերաբերվելով պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման պրոցեսներին, ոչ պակաս լրջությամբ է վերաբերվում ժողովրդական ու գուսանա-աշուղական արվեստին՝ դիտելով այն ազգային երաժշտական մշակույթի զարգացման ընդհանուր հունի մեջ։

Ազգային մշակույթի լավատեղյակ, սկզբունքային գիտնական Մաթևոս Մուրադյանն իր աշխատությամբ լրացրեց հայ երաժշտության պատմության կարևոր բացը՝ ստեղծելով արժեքավոր ուսումնասիրություն։

ՄԱՐԳԱՐԻՏ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ